

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ֆրանսիական լեզվաբանություն մեջ նորաբանությունը բազմակողմանիորեն ուսումնասիրված երևույթներից է, որին աշխատություններ են նվիրել այնպիսի լեզվաբաններ, ինչպիսին են Ա. Դարմաստետերը, Ժ. Դարբելենեն, Ա. Ռեյը, Պ. Ժիլբերը, Լ. Գիլբերը, Լ. Դրոուան, Ժ. Կոռբելը, Ժ.-Ֆր. Սաբլերոլը, Ժ. Պրյուվոն և ուրիշներ:

Ֆրանսերենում *neos* «նոր» և *logos* «խոսք, բան» ձևույթներով կազմված բառերն ի հայտ են գալիս 18-րդ դարում. *néologisme* (1726), *néologue* (1728), *néologisme* (1734) և *néologie* (1758): Աբբա Դեֆոնտենի խմբագրությամբ լույս տեսած բառարանային առաջին աշխատությունը, որի մեջ գործածվել է *néologisme* «նորաբան» բառը, խմբավորում է ժամանակի գրողների ստեղծագործություններից բաղված նոր բառերն ու արտահայտությունները¹: Սակայն պետք է նշել, որ այդ աշխատության նպատակը «հանդուգն գրողների» նորարարությունները ծաղրելն էր: *Néologue* բառն ի հայտ է գալիս աբբա Դեֆոնտենի բառարանի երրորդ հրատարակությունում: Նրա մեկ այլ աշխատության մեջ² տրված է նորաբանության հետևյալ սահմանումը. «(...) c'est le tour affecté des phrases, c'est la jonction téméraire des mots, c'est la bizarrerie, la fadeur, la petitesse des figures...»: (... այն նախադասությունների անսովոր կազմություն է, բառերի հանդուգն միավորում, այն տարօրինակություն է, դժգոհություն, արտահայտությունների խեղճություն...): Ֆրանսիական ակադեմիայի բառարանի 1762 թ. հրատարակության մեջ նորաբանությունը նույն ոգով ներկայացվում է որպես չարաշահում: 1784 թ. լույս տեսած *Journal de la langue françoise* աշխատության մեջ Ֆրանսուա Դոմերգը տարբերակում է *néologie* և *néologisme* եզրերը, ըստ որի, առաջինը նոր բառեր ստեղծելու արվեստն է, իսկ երկրորդը՝ առանց պատճառի նոր բառեր գործածելու մոլուցքը: Նույն կերպ հակադրվում էին *néologue* և *néologiste* եզրերը. առաջինը կերտում էր նորաբանություններ (*néologie*), երկրորդը՝ չարաշահում նորաբանությունները (*néologisme*): 1792 թ. Ֆր. Դոմերգը ստեղծում է «նորաբանությունների կոմիտե», որի նպատակն էր հին հեղինակների երկերում գտնել մոռացության մատնված բառեր, որոնք հաջողությամբ կարող էին կիրառվել, ինչպես նաև ուսումնասիրել գործածվող բառափոխությունները, թե դրանք կարո՞ղ էին արդյոք ընդլայնվել բառածանցման և բառաբարդման միջոցով: Կոմիտեի նպատակներից էր նաև օտար լեզուների բառապաշարի ուսումնասիրությունը, որը թույլ կտար վերհանելու ֆրանսերենում գոյություն չունեցող բառեր և լրացնել այդ բացերը: Հիշյալ կոմիտեի կարևորությունն ընդգծելու համար նշենք թեկուզ այն, որ կազմված էր 150 անդամից:

19-րդ դարում գիտնականներն այլևս չեն տարբերակում *néologie*/*néologisme* եզրերը և գործածում են միայն երկրորդը, որը կիրառվում է «նոր բառի կամ բառի նոր իմաստի գործածություն» նշանակությամբ, սակայն պետք է ասել, որ եզրն ամբողջությամբ չի կորցնում իր բացասական հարանշանակու-

¹ Le Dictionnaire néologique à l'usage des beaux esprits de ce siècle, avec l'éloge historique de Pantalon-Phébus, par un avocat de province, réd. par abbé Guyot Desfontaines, 1726.

² G. Desfontaines. Observations sur les écrits modernes. 1735.

թյունը: Եվ միայն 20-րդ դ. երկրորդ կեսից նորաբանության ուսումնասիրությունը նոր թափ է ստանում լեզվաբանական հետազոտությունների շրջանակներում: Դեռ ավելին, 20-րդ դ. վերջին ֆրանսագիր լեզվաբանության մեջ ի հայտ է գալիս «néonymie» եզրը, որ քվերեկցի լեզվաբան Գի Ռոնդոն գործածում է նշելու համար նորաբանության այն հատվածը, որ վերաբերում է գիտությանը և տեխնիկային²: Եվ բանի որ նորաբանությունն ու տերմինաբանների համալրումը անխզելիորեն փոխկապակցված են, և նորաբանություններ առավել մեծ թվով ի հայտ են գալիս տարբեր գիտատեխնիկական տերմինաբանությունների շրջանակներում, պարզ է դառնում, թե ինչու են վերջիններս ավելի հաճախ ուսումնասիրվում տարբեր գիտակարգերի շրջանակներում³:

Նորաբանությունների և օտար լեզուների ազդեցության ծավալների կապը հետաքրքրական է և տարաբնույթ: Ինչպես ցույց է տալիս ֆրանսերեն լեզվի պատմությունը, 17-19-րդ դդ. լեզվի մաքրության մոլուցքով տարված մտավորականությունը նախնադրում էր չգործածել ֆրանսերենում առկա նորակազմությունը և որսա փոխարեն կիրառել օտար միավորը (մասնավորապես անգլերեն)՝ նպատակ ունենալով ֆրանսերենի բառապաշարը զերծ պահել նորաստեղծ բառերից: Ըստ երևույթին հենց այս պատճառով է, որ ֆրանսերենն այդ դարերի ընթացքում կատարում է բազում փոխառություններ, և միայն 20-րդ դարի վերջին տասնամյակներում լեզվական բաղաբանության փոփոխությունը թույլ է տալիս պատճենելու և թարգմանելու օտար միավորները, քանի որ մեծածավալ փոխառությունները հարցականի տակ էին դնում լեզվի բնականոն զարգացումը: Այսպիսով, նախորդ փուլերում ֆրանսերենը նախընտրում էր փոխառել օտար միավորներ, որոնցից քչերն էին ժամանակի ընթացքում փոխարինվում մայրենի կազմություններով՝ պատճենումներով կամ ազատ թարգմանություններով: 19-րդ դ. վերջին անգլերենից կատարված փոխառությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց չնչին մասն է պատճենվել (*blue stocking – bas-bleu, railway – chemin de fer*):

Նույնը չենք կարող ասել ժամանակակից ֆրանսերենի մասին: Նորակերտ բառամիավորների մեծ մասը պատճենվում կամ թարգմանվում է, և միայն չնչին մասը փոխառվում. հարկ է նշել, որ այստեղ խոսքն առավելապես այն օտար միավորների մասին է, որոնք որոշակի ժամանակահատվածում չեն փոխարինվում պատճենումներով ու ազատ թարգմանություններով:

Նորաբանությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտելու հասարակության, մարդկային մտքի և գիտության զարգացման պատմությունը: Նորաբանության հիմնարար դերի գիտակցումը ստիպում է ստեղծել նորաբանությունների կազմումն ու տարածումը կարգավորող պետական կազմակերպություններ:

Ֆրանսիայում եղել և այսօր էլ առկա է «լեզվաբանական ուղղորդում», որին ակտիվորեն մասնակցում են պետական մարմինները (Կրթության նախարարությունը, Ֆրանսիական ակադեմիան և այլն): 1966թ. ստեղծվում է *Գերագույն կոմիտեն* (Haut Comité)՝ լեզվական հարցեր բննարկելու համար, 1967թ.

² G. Rondeau, Introduction à la terminologie, Québec, Gaetan Morin, 1984, p. 238.

³ Դիմոն. J. Humbley, Le vocabulaire de la nouvelle économie: émergence d'un vocabulaire en anglais et sa réception en français, Béjoint et Maniez (eds.), in *De la mesure dans les termes*, Presses universitaires de Lyon, Lyon, 2005, pp. 394-423; J. Boissy, Tendances linguistiques de la néologie en terminologie, in *La banque des mots*, n° spécial, 1988, pp. 77-83; J.-Cl. Boulanger, Problématique d'une méthodologie d'identification des néologismes en terminologie, in *Néologie et lexicologie: hommage à Louis Guilbert*, Larousse, Paris, 1979, pp. 36-46 և այլն:

Ֆրանսերենի միջազգային խորհուրդը (Conseil international de la langue française), որի նախաձեռնությամբ պարբերաբար լույս են տեսնում *Բառերի շտեմարաններ* (Banque des mots), ուր իրենց տեղն են գտնում փոխառված կամ պատճենման հետևանքով ստեղծված նորաբանություններ: Այս հարցում շատ կարևոր գործառույթ ունի Ֆրանսիական ակադեմիան, որի ջանքերով «Journal officiel»-ում (*Պաշտոնական տեղեկագիր*) տպագրվում են նորաբանությունների, մասնավորապես նորահայտ անգլերեն բառերի ֆրանսերեն համարժեքների ցանկեր: Բացի այդ, Ֆրանսիայի վարչապետին կից գործում է *Ֆրանսերենը կարգավորող ընդհանուր հանձնաժողովը* (Délégation générale à la langue française), որը լույս է ընծայում նորաբանությունների պաշտոնական բառացանկեր, որոնցում տեղ են գտնում նաև Journal officiel-ում տպագրված օտար բառամիավորների դիմաց առաջարկվող պաշտոնական համարժեքները (recommandations officielles): Ավելացնենք, որ նախարարություններում գործում են տվյալ բնագավառում ստեղծված նորաբանություններն ուսումնասիրող տերմինաբանական խմբեր, որոնց առաջարկություններն այնուհետև փոխանցվում են տերմինաբանական ընդհանուր հանձնաժողովին: Ինչ վերաբերում է նորաբանություններին նվիրված լեզվաբանական ժողովածուներին, ապա պետք է նշենք Neologica-ն, որը լույս է տեսնում տարին մեկ անգամ ժ.-ֆր. Սաբլերոյի և Ջ. Գյուլմերի գլխավորությամբ:

Ժամանակակից լեզվաբանության մեջ տարբերում են *նորագիտություն* և *նորաբանություն* տերմինները: *Նորագիտություն* է անվանվում այն գիտությունը, որն ուսումնասիրում է նորաբանությունները, նրանց երևան գալու, ընդհանուր բառապաշարում մշտական տեղ գրավելու կամ չգործածվելու պատճառները և այլն: Ինչ վերաբերում է *նորաբանություն* եզրին, այն ավելի լայն իմաստ է ստանում՝ նկարագրելով թե՛ գործընթացը, որի արդյունքում առաջ են գալիս նորանություններ, թե՛ այդ գործընթացի հետևանքով առաջացած միավորները: Սակայն պետք է նշել, որ նորաբանությունը որպես բառաստեղծման գործընթաց ավելի դժվար է ենթարկվում նկարագրության, քան նրա արդյունք հանդիսացող նորաբանությունը: Հենց նորաստեղծ միավորների ուսումնասիրությունն է թույլ տալիս պատկերացում կազմելու նորաբանության գործընթացի, լեզվի զարգացման միտումների մասին: «Լայն առումով լեզվական յուրաքանչյուր նոր երևույթ կամ միավոր նորաբանություն է: Նեղ, բառագիտական առումով նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, իմաստ»³:

Ֆրանսիացի լեզվաբան Լ. Գիլբերը առանձնացնում է նորաբանությունների առաջացումը պայմանավորող երեք հիմնական գործոն. ա) անվանողական (առարկայի կամ հասկացության անվանում), բ) ռեաբանական (արտահայտչական երանգավորումով օժտված խոսքի պահանջ), գ) համակարգային (ներունակորեն հնարավոր բառերի կազմություն՝ լեզվում գոյություն ունեցող կաղապարներով)⁴:

Դիտարկելով նորաբանությունների ընդունելի կամ մերժելի լինելու հարցը՝ Լ. Գիլբերը նշում է ներհակ միտումներ: Մի կողմից նկատելի է լեզվական արարման սահմանափակությունը, քանի որ մարդկանց առօրյա խոսքը որոշակիորեն կաղապարված է, մյուս կողմից ակնհայտ է մշտապես նոր բառեր ստեղծելու և եղածներին նոր իմաստներ հաղորդելու միտումը: Նորաբանու-

³ Ա. Բալլեզիզյան, Գալ-ֆրանսիական լեզվական առնչությունները XIX դարում, «Փյունիկ», Երևան, 1997, էջ 73:

⁴ L. Guilbert, La créativité lexicale. Paris, 1975, p. 27.

թյուններն ընդունելու կամ մերժելու մեջ կարևոր դեր են խաղում պահպանողականությունը, լեզվի ամաղապտության համար մղվող պայքարը և այլն⁷:

Բառապաշարի նորացմանը նպաստող գործոնները պայմանականորեն բաժանվում են երկու մեծ խմբի՝ ներլեզվական և արտալեզվական: Նորաբանությունների ուսումնասիրությունը չի կարող զերծ մնալ ներլեզվական և արտալեզվական գործոնների փոխկապակցված ուսումնասիրությունից, քանի որ հենց նրանց փոխներգործության արդյունքում են առաջանում լեզվական նոր տարրեր: Նոր բառեր կամ բառակապակցություններ կարող են կազմվել լեզվի ներքին միջոցներով կամ փոխառվել, այսինքն՝ վերցվել որևէ օտար լեզվի բառապաշարից առանց ձևական փոփոխությունների կամ չնչին փոփոխություններով, ինչպես նաև լեզվում առկա բառերը կարող են բառիմաստային զարգացման շնորհիվ կամ միջլեզվյան մասնակի հոմանշության ազդեցությամբ կիրառվել նոր նշանակություններով: Սակայն չպետք է մոռանալ, որ ոչ բոլոր նորաբանություններն են մտնում լեզվի գործածական բառապաշար: Դրանց մի մասը ունենում է դիպվածային կիրառություն և որոշ ժամանակ անց դուրս մղվում լեզվի բառապաշարից:

Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է տալ նորաբանությունների տարբեր դասակարգումներ, որը և արվել է տարբեր դարաշրջաններում բազում լեզվաբանների կողմից: Նման դասակարգումներն այնքան բազմաթիվ են, որ դրանց համակարգման անհրաժեշտություն է առաջանում⁸:

Այսպես, օրինակ, եթե ուսումնասիրության առարկա է դառնում նորաբանության առաջացման և կենսունակության ժամանակահատվածը, ապա կունենանք հետևյալը.

ա) *նորաբանություններ*, որոնք որևէ քիչ թե շատ տևական ժամանակահատվածում կայուն գործածություն ունեցող նոր բառեր, բառակապակցություններ են, այլև դրանցով արտահայտված նշանակություններ,

բ) *դիպվածաբանություններ*, այսինքն՝ վաղանցիկ գործածություն ունեցած նորամուծություններ⁹:

Եթե նկատի առնենք նորակազմության աղբյուրը, ապա կունենանք հետևյալը.

ա) օտար ազդեցությունից անկախ, ներքին բառակերտմամբ ստեղծված միավորներ,

բ) օտար ազդեցությամբ երևան եկած միավորներ հետևյալ ենթաբաժանումներով. 1) փոխառություններ (օտար ձևաիմաստային ամբողջության փոխանցում), 2) բառի, բառակապակցության, ինչպես նաև ասույթի պատճենումներ (օտար բառակազմական կաղապարի վերարտադրում մայրենի լեզվանյութով), 3) իմաստային փոխառություն կամ պատճենում (օտար միավորի իմաստային կառուցվածքի վերարտադրում մայրենի միջոցներով), 4) կիսապատճենումներ (օտար կառուցվածքի վերարտադրում մասամբ մայրենի, մասամբ օտար բաղադրիչներով) և 5) ազատ թարգմանություններ (օտար բառամիավորի խթանումով ստեղծված նորակազմություն, ուր կաղապարի կրկնօրինակում չկա):

Ըստ ձևաիմաստային բնութագրի նորամուծությունները կարող են լինել երկու կարգի.

ա) *նորակազմ միավորներ*, երբ նորություն է բառի արտաքին՝ հնչյունական կող-

⁷ Նույն տեղում, էջ 28:

⁸ J.-F. Sablayrolles. Neologismes: une typologie des typologies, cahier du C. I. E. L., 1996-1997.

⁹ Ա. Բարլեզիզյան, նշվ. աշխ., էջ 73-74:

մը, այսինքն՝ երբ նորահայտ հասկացության համար ստեղծվում է նոր նշանակիչ, բ) *իմաստային նորաբանություն*, երբ նոր է նշանակությունը, լեզվում մինչ այդ գոյություն ունեցող միավորը նոր իմաստ է ձեռք բերում, կամ էլ տեղի է ունենում խոսքիմասային փոխանցում, այսինքն՝ նոր հասկացություն արտահայտելու համար վերցվում է լեզվում արդեն գոյություն ունեցող նշանակիչ¹⁰:

Այսպիսով, ցանկացած նորաբանություն ձևաիմաստային է, այսինքն՝ 1) համարվում է համակարգի միավորների կազմը ն/կամ 2) ավելացնում շարություն համակցելիության իր հնարավորությունները: Այդ տեսանկյունից առանձնանում են *հարացուցային* և *շարակարգային* նորաբանություններ¹¹: Նորաբանությունը հարացուցային է, եթե այն դիտվում է մեկ ենթախումբ կազմող միավորների շարքում (օր.՝ *achalandeur* բառը – *eur* վերջավորություն ունեցող ածականների շարքում), և *շարակարգային* է, եթե արդեն գոյություն ունեցող միավորը հանդես է գալիս իր համար անսովոր լեզվական միջավայրում (օր.՝ *grappe d'entreprises, livre électronique, consommateur cible*)¹²:

Ըստ մեկ այլ դասակարգման՝ նորաբանությունները բաժանվում են երկու մեծ դասերի՝ *ձևաբանական* (որոնք կազմվել են ածանցման, բառաձուլման, բառաբարդման, հապավման, և այլ եղանակներով) և *իմաստային* (երբ լեզվում գոյություն ունեցող միավորը ներքին իմաստային զարգացման արդյունքում կամ օտար լեզվի ազդեցությամբ ստանում է նոր նշանակություն)¹³:

Նորաբանությունների առանձնացման տարբեր չափանիշներ են առաջ քաշվում: Լեզվաբանները բառամիավորի նորակերտ լինելը որոշում են՝ պայմանավորված հետևյալով.

1. բառարանում գրանցված չլինելու հանգամանքով¹⁴,
2. ի հայտ գալու ժամանակով¹⁵,
3. անկայունությամբ (ուղղագրական, արտասանական կամ իմաստային),
4. լեզվակիրների կողմից որպես նորություն ընկալվելու հանգամանքով,
5. նորահայտ իրույթ (հասկացություն) նշանակելու փաստով,
6. ստեղծման պահից հետո ընկած որոշակի ժամանակահատվածով:

Պետք է սակայն նշել, որ հիշյալ չափանիշներից առաջինը չի ընդունվում ոմանց կողմից, որոնք իրավացիորեն նշում են, որ բառարաններում չգրանցված, այսինքն՝ միայն խոսքի մակարդակում արձանագրված նորակազմությունները կարող են ուսումնասիրվել հոգելեզվաբանության շրջանակներում, մինչդեռ բուն լեզվաբանական ուսումնասիրություն հնարավոր է լեզվի համակարգում ընդգրկված նորակազմությունների պարագայում¹⁶:

Նշենք նաև, որ ամենից հաճախ կիրառվող վերջին չափանիշը չի կարող որոշիչ համարվել, քանի որ տարբեր միավորների՝ որպես նորաբանություն ըն-

¹⁰ H. Mitterand, Les mots français, série « Que sais-je? », éd. Presses Universitaires de France, Paris, 1972, p. 99.

¹¹ Լույս տեղում, էջ 100:

¹² Օրինակներ քաղված են Ֆրանսիական ակադեմիայի պաշտոնական կայքից. www.academie-francaise.fr.

¹³ Fr. Gaudin, L. Guespin, Initiation à la lexicologie française, De la néologie aux dictionnaires, éd. Champs linguistiques, Duculot, Belgique, 2000, p. 355.

¹⁴ www.fr.wikipedia.org

¹⁵ Այսօր լեզվաբանների մեծ մասը աշխատում է զերծ մնալ բառերին նորաբանության պիտակ տալու գայթակղությունից և բավարարվում է նրա ստեղծման ճշգրիտ կամ մոտավոր տարեթիվը նշելով:

¹⁶ Fr. Gaudin, L. Guespin, նշվ. աշխ., էջ 248:

կալվելու ժամանակահատվածը չի կարող նույնը լինել՝ կախված նրանց գործածությունից: Ամեն դեպքում որոշ լեզվաբաններ¹⁷ նշում են, որ հաշվի առնելով զանգվածային լրատվամիջոցների դերը՝ լեզվական միավորի նոր լինելու ընկալումը կարող է տևել մոտ հինգ տարի:

Երկայացված տարբեր դասակարգումներն ու մոտեցումները չեն սպառում ֆրանսիական լեզվաբանական գրականության մեջ նորաբանությունների մասին գոյություն ունեցող նյութը: Սույն հոդվածի սահմաններում փորձ է արվել ներկայացնելու հիմնականները:

А. СТЕПАНИН

ПРОБЛЕМА НЕОЛОГИЗМОВ ВО ФРАНЦУЗСКОЙ ЛИНГВИСТИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Настоящая статья посвящена изучению современных теорий образования новых языковых единиц. Статья предваряется необходимым историческим анализом изучаемого вопроса, особое место в нормировании и стандартизации лексических новообразований отводится роли государственных институтов, в частности, Французской Академии. На основе вышеизложенного представляются наиболее приемлемые критерии классификаций, способствующих дальнейшему изучению вопроса освещения тенденций развития словарного состава современного французского языка.

A. STEPANYAN

THE PROBLEM OF NEOLOGISMS IN FRENCH LINGUISTICS

The paper studies modern theories of neologisms, starting with historical analysis of the subject matter. In the process of normalization and standardization of lexical neologisms a special role is accorded to state institutions, particularly to the French Academy. Thus we present the most acceptable criteria of classifications that contribute to the further study of development of the Modern French vocabulary.

¹⁷ J. Pruvost, J.-F. Sablayrolles, Les néologismes, Paris, Presses universitaires de France, série « Que sais-je? », 2003, p. 127.